ռած գայ բնաջինջ ընէ ասպետաց տուն՝ տեղը։ Պերդրան մէկ կողմէ վախնալով սպառնալիքէն, մէկայլ կողմէն այլ իր և իրեններուն պատուոյն և քաջութեան նախատինք սեպելով քաղաքը մատնել հակառակորդին, և անկէ աւելի իր հիւրերը՝ հոն ապաւինեալ թագուհիները, ասպետական հնարագիտութեամբ մը պատասխանեց Կոստանդեայ, թէ մենք ոչ կարողութիւն ունիմք ձեր դէմ կենալու քաղաքս պաշտպանելու, և ոչ այլ կրնամք մատնել. վասն զի բարեյիշատակ Լեւոն թագաւոր մեզի տուած է, և հոս են իր կիներն և դուստրն՝ ձեր թագաժառանգն, և հոս կ'ուզեն մնալ. ինչպէս կրնամք մենք համարձակիլ մեր բարերարները և մեզի դիմողները ձեր ձեռքը տալ իրենց կամաց դէմ. ուրեմն թողուցէք մեզի՝ որ մենք մեր կամքը դուրս ելլենք բերդէն, և դուք գիտցածնիդ ըրէք։ Այս պայմանաւ ասպետքն իրենց պատուոյն ելան թողուցին զՍելևկիա. Կոստանդին նորէն ձեռք ձգեց մօրը բունէն բռնած ձագի պէս՝ Զապելը, և հրաւիրեց 'ի տիկնութիւն և 'ի մայրութիւն Հայոց։

Կը շարունակուի։

ՀԻՆ ԳՆԱՐ

Տաղ սրբոց Վարդանանց.

Այսօր յոյժ ցընծան եկեղեցւոյ մանկունք.
Մայր սիոնն որդւովք բերկրեալ՝
Պար առեալ տօնէ ըզձեր
Խնդութեամբ մեծաւ զհանդէս։
Հրաշալի ձայնիւ երգէ զհոգւոյ հընչմունս,
Խառնեալ ընդ երգս եւ զողբս։
Վարդան վանող չարին սպանող,
Վրկայ խաչելոյն մահուամբ։
Սիրով ձեր հարեալ վառեալ սրբոտիւ տրրփիւ
Ըզձալի բաղձմամբ տօնէ։

Խորէն խորհուրդ անուն խորին,
Խորհրդեամբ կրցորդ խաչին։
Ճշդնութեան ձերոյ զարիական մրցումն
Մեծաւ պատրէ հրրճուիք։
Արտակ ներկեալ արեամբ անձինդ՝
Նրկուն արարեր զվանողն։
Ի ճակատ կրրկին մարտեայք քաջութեամբ սրրտիւ
Ջերկուցրն կոխեցէք զխայթոցս։
Հմայեակ հրմուտ զինուոր եւ քաջ
Հարեր զԲելիար ի սիրտ.
Ի պատերազմի բարբարոսաց զօրաց
Պարսիցրն դրնդից յաղթոդք։
Տաճատ տաճար Հոգւոյն սրրբոյ
Տուն երրորդութեաննն եւ տեղ։
Զհաւատոյ ըզվրէժ խաբման բռնաւորին
Անձին քաջութեամբ առէք։
Վահան վերնոյն խորհող յերկրի
Վահանիւ յուսոյ ճրգնեալ։
Ողջակէզք պարարտք պատարագեցէք զանձինս
Հոտ անուշութեան բուրեալ։
Արսէն աստուածասէր մարտիկ
Արեամբ զբրարիոնն առեալ
Նահատակք եւ յաղթոդք խրոխտք ի պատերազմի
Հարազատ մաքուր վրկայք։
Գարեգին գովեալ նախնի մրցող՝
Գլուխ քո ընկերաց դրնդին։
Խումբք զօրաց հազար տասանց երից վեցից
Ընդ վեհիցն առէք ըզպսակս։
Ի մեծ յասպարիսի ձերոյ
Ցիսուս սրովբէիք բերկրեալ։
Զեզ մաղթեմք տօնոդքս, իշխանք՝ տերանցրն տեառն,
Զինաւորք դնողին զհանդէս,
Հայցեմք Հայաստանեայց ժողովք
Ցօր ձեր կատարման մեծի։
Բարեխօս լերուք առ բարերարն Ցիսուս
Պահել անվրրդով յաւէտ
Զորրս փառս հաւատով երդեն
Հօր Որդւոյ ընդ Հոգւոյն. ամէն։